2024-2025 ՈՒՍՏԱՐԻ
ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ
10 - ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Տևողությունը՝ **90** րոպե:
Գնահատումը կատարվում է **20** միավորանոց համակարգով:
Բոլոր առաջադրանքներն ունեն մեկ ճիշտ պատասխան:
Ճիշտ պատասխանը գնահատվում է 1(մեկ) միավոր:

1.ՀՀ մայր օրենքը սահմանում է. «որ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության…».

1. Փրկությանը 2. Պահպանությանը
3. Ազատությանը 4. Պաշտպանությանը

2.Զորամրցումներից մեկի ժամանակ Մենուա արքան իր Արծիբի նժույգով քանի՞ կանգուն է ցատկել.

1.22 կանգուն 2.25 կանգուն 3.12 կանգուն 4.15 կանգուն

3. Ո՞ր երկրի բանակի կազմում ստեղծվեց հայկական լեգեոնը.

1. Լեհական 2. Ալբանական 3. Ֆրանսիական 4. Սերբական

4. Նշվածներից ո՞վ Դավիթ-բեկի ժամանակ չի եղել առանձին զորաջոկատի հրամանատար.

1. Տեր-ավետիսը 2. Թորոսը 3. Փարսադանը 4. Մխիթարը

5. Ի՞նչ է որմնանցքը.

1. Հրաձգության ժամանակ զենքը հարմար տեղադրելու համար խրամատի, խրամուղու, հողաթմբի, պատի և այլնի վրա բացված անցքն է:
2. Դիտարկման համար խրամատի, խրամուղու, հողաթմբի, պատի և այլնի վրա բացված անցքն է:
3. Օդափոխության համար խրամատի, խրամուղու, հողաթմբի, պատի և այլնի վրա բացված անցքն է:
4. Հրաձգության ժամանակ դիտարկումը ճիշտ կազմակերպելու հարմար տեղադրելու համար խրամատի, խրամուղու, հողաթմբի, պատի և այլնի վրա բացված անցքն է:

6. Որո՞նք են համարվում խուլ պատեր.

1.Այն պատերն են, որոնց վրա առանձնացված չեն պատուհանագոգեր:
2.Այն պատերն են, որոնց պատուհանագոգերը քողարկված են:
3.Այն պատերն են, որոնց վրա կան ձայնամեկուսիչներ:
4.Այն պատերն են, որոնք համարվում են տվյալ շինության հիմնական պատեր:

7. Համապատասխանեցնել հրամանատարները ջոկատներին.

1.Անրանիկ Օզանյան	ա. 4 -րդ ջոկատ
2.Դրո	բ. 1-ին ջոկատ
3.Համազասպ Սրվանձտյան	գ. 3-րդ ջոկատ
4.Արշակ Գաֆաֆյան	դ. 2-րդ ջոկատ

1.1-բ, 2- դ, 3 – ա, 4 – գ
2.1-ա, 2- գ, 3 – դ, 4 - բ
3.1-դ, 2- բ, 3 – գ, 4 - ա
4.1-գ, 2- ա, 3 – դ, 4 – գ

8. **Ի՞նչ ֆունկցիա է կատարում փակաղակը.**
1.Փակաղակը փամփուշտը մղում է փամփշտանոց, փակում է փողանցքը, հարվածում է հրապատիճին և փամփշտանոցից հանում է պարկուճը:
2.Փակաղակը փամփուշտը մղում է փողանցք, այնուհետև փակում է փողանցքը, հարվածում է հրապատիճին և փամփշտանոցից հանում է պարկուճը:
3.Փակաղակը փամփուշտը մղում է փամփշտանոց, փակում է փամփշտանոցը, հարվածում է պարկուճին և փողից հանում է փամփուշտը:
4.Փակաղակը փամփուշտը մղում է փամփշտանոց, փակում է փողանցքը, հարվածում է հրապատիճին և փամփշտանոցից հանում է գնդակը:

9. **Նշվածներից ո՞ր ուժը օդում չի ազդում գնդակի արագության վար.**
1.Ծանրության ուժը 2.Արքիմեդյան ուժ
3.Օդի դիմադրության ուժը 4.Երկրի ձգողության ուժը

10. **Որքա՞ն մարդ է զոհվել 1878 թվականին Չինաստանում Խուանխե գետի ջրհեղեղի հետևանքով.**
1.8 մլն 2.7 մլն 3.7.5 մլն 4.9 մլն

11. **Ի՞նչ է ձգաբանությունը (բալիստիկան).**
1.Ձգաբանությունը գիտություն է հրազենային գնդակների, հրետանային արկերի, ավիառումբերի, նռնակների՝ որպես ազատ նետված մարմինների շարժման մասին:
2.Ձգաբանությունը գիտություն է գնդակի՝ որպես ազատ նետված մարմնի շարժման մասին:
3. Ձգաբանությունը գիտություն է հրետանային արկերի և ավիառումբերի նետման մասին:
4. Ձգաբանությունը գիտություն է հրազենային գնդակների, հրետանային արկերի, ավիառումբերի, նռնակների նետման մասին:

12. **Նշվածներից ո՞րը ուշադրության տեսակ չէ.**
1.Ներքին 2.արտաքին 3.կամածին 4.արտակամածին

13. **Նշվածներից, ո՞րը ՊԿ գնդացրից հրաձգություն վարելու եղանակ չէ.**
1.կարճ 2.Երկար 3.Անընդհատ 4.Ընդհատվող

14. **Նշվածներից ո՞րն է տարածվում կենսաբանական զենքով.**
1.Լյուիզիտ 2.Զարին 3.Զոման 4.Տոքսիններ

15. **Ինչպիսի՞ հիվանդություններ են առաջացնում ռիկետսիաները.**
1.Բծավոր տիֆ և տենդ 2.Կարդիոզ և ծաղիկ
3.Դեղին տենդ և բծավոր տիֆ 4.Ծաղիկ և բծավոր տիֆ

16. **Քանի՞ ֆիդայի էր մասնակցում Առաքելոց վանքի կռվին.**
17. **Սարդարապատի ճակատամարտում թուրքական զորքը քանի՞ հազար զոհ տվեց:**[1]
18. **Որովայնի վնասվածքի դեպքում քանի՞ րոպե ընդմիջումով է կարելի սառցապարկ դնել:**
19. **Կենդանու կծածի դեպքում տուժածին քանի՞ օր պետք է պահել հսկողության տակ:**
20. **Որքա՞ն է կալաշնիկովի գնդացիրի գնդակի սկզբնական արագությունը:**

[1].Պատասխանը գրելիս «հազար» բառը անհրաժեշտ չէ գրել, պետք է գրել միայն թիվը: